ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/31460-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-166-29.05.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-166-29.05.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է մերսման սրահը սահմանել որպես սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ՝ արգելելով վերջինիս տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում, ինչպես նաև ամրագրել թույլտվություն ստանալու պահանջ:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նախագծի հիմնավորմամբ բավարար հստակությամբ չի բացահայտվել սահանափակման ենթակա մյուս ծառայության օբյեկտների՝ կարաոկեի, դիսկոտեկի, հեշտապարային ակումբի, բաղնիքի, շոգեբաղնիքի, սաունայի հետ մեկտեղ ցանկում մերսման սրահների ներառումը: Լրացուցիչ հիմնավորման կարիք ունի նաև բժշկական հաստատությունների տարածքներում մերսման սրահների տեղակայման արգելքի նպատակահարմարությունը, մասնավորապես, հստակ չէ, թե արդյոք առաջարկվող սահմանափակումը տարածվելու է նաև բուժական մերսման կաբինետների վրա, թե ոչ: Այդ համատեքստում հայտնում ենք, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» N 1936-Ն որոշմամբ մանկական նևրոլոգիական մասնագիտացված հիվանդանոցների և մանկական նյարդաբանական բաժանմունքների համար որպես պարտադիր պայման սահմանված է մերսման սեղանի և մերսող բուժքրոջ, իսկ մանկական բուժական ֆիզկուլտուրայի բաժանմունքի համար՝ մերսման սեղանի առկայության պահանջը:

Միաժամանակ հարկ է նշել նաև, որ «Ծառայությունների ծավալի մասին» ձև 1-ծառայություններ (փոքր) (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի N 13-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշման 50-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն Տող 250.5-ը ներառում է ֆիզիկական առողջության պահպանման հետ

կապված գործունեությունը՝ արևաբուժարանների, հանքաջրաբուժական, քաշի նվազեցման և նիհարելու սրահների, մերսման կաբինետների (բացի բուժական մերսումից) և այլ ծառայությունները: Տվյալ նորմով, որպես ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեություն, նշվում են «մերսման կաբինետները»: Ուստի, նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտ կլինի համապատասխան փոփոխություն կատարել նաև նշված իրավական ակտում: Այս նկատառումը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի 3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմանը:

Հստակեցման կարիք ունի այն հարցը, թե արդյոք նախագծի ընդունման դեպքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներին վերաբերելի կարգավորումները կտարածվեն այլ ծառայությունների մատուցման օբյեկտների տարածքում գործող մերսման սրահների վրա:

Ամփոփելով վերաշարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված դիտողությունների հիման վրա օրենքի նախագիծը լրամշակել:

17 հուլիսի 2019 թվականի N 946 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-166-29.05.2019-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հուլիսի 17

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-166-29.05.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15.2-րդ հոդվածի

ա) երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ՝ կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ

բ) ութերորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր իններորդ պարբերությամբ՝

մերսման սրահ՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտ, որտեղ մկանային լարվածությունը թուլացնելու նպատակով մերոսողի ձեռքերի կամ հատուկ սարքերի միջոցով մեխանիկական և չափավոր ազդեցություն է ներգործվում մարդու մարմնի վրա:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 26.09.2019 թվականին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին

Օրենսդրական նախաձեռնության անհրաժեշտությունը.

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) նպատակ ունի կանոնակարգել սպառողների ժամանցի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված մերսման ծառայությունների կազմակերպումը: Սույն Նախագծով առաջարկվում է մերսման սրահներն ընդգրկել սահմանափակման ենթակա գործունեության օբյեկտների շարքում՝ կանոնակարգելով բազմաբնակարան շենքերում գործող մերսման ծառայություններ մատուցող օբյեկտների գործունեությունը, մասնավորապես՝ վերջիններիս տեղակայումը: Ըստ այդմ, Նախագծով նախատեսվում է.

- ընդգրկել մերսման սրահները սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների շարքում
- սահմանել «մերսման սրահ» հասկացությունը:

Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների արդյունքում

- Կարգելվի մերսման սրահների տեղակայումն բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում:
- Համայնքի ավագանին կսահմանի մերսման սրահի տեղակայմանը, այսինքն՝ հեռավորությանը ներկայացվող պահանջները:
- Մերսման սրահների գործունեության թույլտվությունը տրամադրելու իրավունքը կվերապահվի համայնքի ղեկավարին, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին: